

Հանրապետությունում գրանցվող օդի բարձր ջերմաստիճանով պայմանավորված, անտառային և հարակից բուսածածկ տարածքներում հրդեհների առաջացման, տարածման վտանգի կանխարգելման, դրանց հետևանքով բնակչությանը, բնությանը հասցվող վնասների ռիսկերի նվազեցման, շրջակա միջավայրի պաշտպանության և անվտանգության նկատառումներից ելնելով, հորդորում ենք ցուցաբերել առավելագույն զգուշավորություն և պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, մասնավորապես՝

### **Արգելվում է.**

- նետել այրվող լուցկի, չմարված ծխախոտի մնացորդ,
- կատարել չոր խոտի խոզանի այրում (բացի վերահսկելի այրումից, որոնք իրականացվում են սահմանված կարգով, որոշակի ժամանակահատվածներում՝ տեղական իշխանությունների թույլտվությամբ),
- շահագործել անսարք սնուցման համակարգով մեքենաներ,
- օգտվել բաց կրակից՝ վառելիքով լիցքավորված մեքենաների շրջակայքում,
- որսի համար օգտագործել դյուրավառ և մարմրող նյութերից փամփուշտի խիցեր,
- թողնել (թափել) քսայուղով, բենզինով, կերոսինով և այլ դյուրավառ հեղուկներով ներծծված լաթեր (բացի հատուկ հատկացված տեղերից) և այլն,
- բացատներում թողնել շշեր, ապակու կտորներ, քանի որ դրանք կարող են ֆոկուսացնել ճառագայթներն ու հանդիսանալ հրկիզող լինզաներ,
- վառել խարույկներ, խիստ անհրաժեշտության դեպքում դա կարելի է անել բաց տարածքներում՝ շրջապատելով այն 0,5 մետրից ոչ պակաս միներալիզացված շերտով, իսկ վերջում մարել ջրով կամ ծածկել հողով:

### **Հրդեհը հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է.**

- անհապաղ ահազանգել 911՝ տեղեկություններ հայտնելով հրդեհի ճշգրիտ տեղի ու ժամանակի վերաբերյալ,
- մինչև հրշեջների տեղ հասնելը, առկա հրդեհաշիջման միջոցներով (կրակմարիչներ, ջրաղբյուրներ և այլն) ձեռնամուխ լինել հրդեհաշիջման աշխատանքներին:

Եթե հայտնաբերվել է հրդեհի փոքր օջախ, պետք է փորձել հանգցնել այն: Դրա համար անհրաժեշտ է օգտագործել սաղարթավոր ծառերի տեսակների կամ մատղաշ ծառերի ճյուղերի կապուկ, թաց հագուստ, ամուր կտոր: Կրակի եզրաշերտին կողքից՝ հրդեհի օջախի կողմը սահող հարվածներ հասցնել՝ ասես ավելելով, սրբելով կրակը: Ճյուղերը, կտորը յուրաքանչյուր հարվածից հետո շրջել, որպեսզի դրանք այդ ձեռով սառչեն ու չայրվեն: Ոչ մեծ կրակը կարելի է տրորել ոտքերով, չթողնելով որ այն տարածվի ծառերի բներն ու սաղարթները:

Անտառային հրդեհի գոտում հայտնվելիս անհրաժեշտ է որոշել քամու ու կրակի տարածման ուղիները, շարժվել կրակի տարածմանը զուգահեռ, դեպի անվտանգ վայր (գետ, առվակ, այլ ջրամբար): Եթե հնարավոր չէ դուրս գալ հրդեհի գոտուց, պետք է փորձել մտնել մոտակա ջրամբարը, ծածկվել թաց հագուստով, բերանն ու քիթը պաշտպանել թաց դիմակով: